

ԴԻՏԱՐԿՎԵԼ ԵՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԹԱՑՈՂ ՀՐԱՏԱՊ ԾՐԱԳՐԵՐԸ

29.09.2015

Կոտայքի մարզպետ Կ. Գուլոյանը հերթական աշխատանքային այցելությունն է կատարել մարզի Հրազդան և Լեռնանիստ համայնքներ:

Հիշյալ համայնքներում ՀՀ Կառավարության կողմից իրականացվող 6-րդ հրատապ ծրագրի շրջանակներում ընթանում են ներհամայնքային փողոցների և բակերի ասֆալտապատման աշխատանքներ:

Մարզպետը Հրազդանի քաղաքապետ Ա. Դանիելյանի ուղեկցությամբ շրջայց է կատարել քաղաքի Միկրոշրջան թաղամասի մի շարք բազմաբնակարան շենքերի բակերում, ծանոթացել ասֆալտապատման աշխատանքների ավարտական փուլի մանրամասներին, ինչպես նաև հանդիպումներ ունեցել համայնքի բնակիչների հետ:

Հրազդանցիների հետ հանդիպման ընթացքում Կոտայքի մարզպետ Կ. Գուլոյանը նախանշել է մարզկենտրոնի շարունակական զարգացման կարևորությունները, որոնք առաջիկայում մաս են կազմելու տարբեր ծրագրերի:

Մարզի ղեկավարը Լեռնանիստի համայնքապետ Ա. Հայրապետյանի ուղեկցությամբ եղել է համայնքի ներթաղամասային մի շարք հատվածներում, ծանոթացել ասֆալտապատման աշխատանքների հիմնական մոտեցումներին, գրուցել ինչպես գործընթացն իրականացնող կազմակերպության ղեկավարի, այնպես էլ տեղի բնակիչների հետ: